

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՆԵՐԱԼԱՑԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Կախադեմիայի ակադեմիկոս

Մեր երկրի սոցիալիստական տնտեսության հետագա հզոր վերելքի հետ կապված վիճակարի խնդիրների հաջող լուծումը նշանակալից շափով կախում ունի հայտնաբերված հարուստ միներալա-հոտաքային ռեսուրսների արագ յուրացումից և նրանց հետագա ընդլայնումից:

Ժողովրդական տնտեսության զարգացման գործում շատ կարևոր դեր է հատկացվում Հայկական ՍՍՌ-ին, որի ընդերքը հարուստ է զանազան տեսակի օգտակար հանածոներով:

Սովորական կարգերի հաստատումից հետո, անցած տարիների ընթացքում, ռեսառուգիկայի տերիտորիայի վրա պլանաշափ և սիտումատիկ կերպով կատարված երկրաբանական-հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել են պղնձի, կապարի, ցինկի, ունկու, մոլիբդենի և այլ մետաղների արդյունաբերական հանքավայրեր, ինչպես նաև զանազան տեսակի ոչ մետաղային հումքի հանքավայրեր: Նրանց բազայի վրա ստեղծվել են բազմաթիվ ձեռնարկություններ և զարգացել ժողովրդական տնտեսության զանազան ճյուղեր:

Ռեսպոբլիկայի հսկական գանձարանը դարձավ Հայաստանի հարավային մասը՝ Զանքեզուրը: Այստեղ պղնձի հանքանյութերի հանուլիքը և պղնձի հալումը գոյություն ունեն շատ հին ժամանակներից: Սակայն Զանքեզուրի հարստությունները, ինչպես պետք է, հայտնաբերվեցին միայն վերջերս, երբ հայտնագործվեցին և հետախուզվեցին պղնձա-մոլիբդենային խոշորագույն

հանքավայրեր և սկսվեց նրանց արդյունաբերական յուրացումը: Ներկայումս հայտնաբերված պղնձա-մոլիբդենային հանքանյութերի պաշարները մեծ են, բայց և նրանցով էլ չեն սահմանափակվում Զանքեզուրի հայտնաբերության մեջ մասը թույլ շշափված հետախուզական աշխատանքներով:

Զգալիորեն ընդլայնվել են մյուս հին լեռնահանքային շրջանի՝ Ալավերդում հետանկարները: Այդ շրջանի Շամլուղի, Ալիբալայի հանքավայրերում, որոնք շահագործվել են մի քանի հարյուրամյակների ընթացքում և համարվում էին լրիվ արդյունահանված, գիտական կանխորոշումների շնորհիվ սովորական երկրաբանները հայտնաբերել են պղնձի և բազմամետաղային հանքանյութերի խոշոր կուտակներ, որոնք իրենց պաշարներով գերազանցում են վաղուց հայոնի կոտակներից: Նոր ձևով են գնահատվել հատկապես Ալավերդու պղնձի հանքավայրի հետանկարները, և հին, անուշագրության մատնված հանքերում նորից վերսկսվել են մանրամասն երկրաբանական-հետախուզական աշխատանքներ,

որոնք արդեն տվել են առաջին դրական արդյունքները: Այստեղ հորատանցքերի միջնորդ պարզվել է հանքանյութի տարածումը մինչև խոր հորիզոնները և հայտնաբերվել են հանքավայրեր, որոնք անցյալում շահագործման չեն ենթարկվել:

Ռեսպոբլիկայի նոր լեռնա-հանքային շրջան է դառնում երևան քաղաքից հյուսիս գտնվող

Ախտայի շրջանը: Այստեղ, Փամբակի լեռնաշղթայի ընդերքում, հայտնաբերվել են մոլիբդենի հանքանյութերի, երկաթի և այլ հանքավայրեր, նեփելինյան սիենիտների խոշոր կոտակումներ: Սիենիտները գործնական մեծ նշանակություն են ձեռք բերում նրանցից կավահող հանելու և վերամշակման կողմնակի պրոդուկտների արդյունահանման տեխնոլոգիան մշակելու կապակցությամբ:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում Սևանա լճի հյուսիս-արևելյան ափը, որտեղ ուղղարակմային ապարների հետ են կապված քրոմային երկաթաքարի, հրակայում հումքի, ասբեսաի հանքավայրերը:

Հետաքրքրի է նշել, որ ոսկու հանքավայրում պահպանվել են հինգանույթների հետքերը (փըլված փորովածքներ, նրանց անցման և հանքանյութերի մշակման գործիքներ), որոնք վկայում են այստեղ գետ խոր անցյալում ոսկու հանույթի մասին:

Ուսուուրկիկայի բոլոր հանքային շրջաններում գտնվում են երկաթի հանքավայրեր:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է հատկացվել հանքանյութերի նյութական կազմության մանրամասն ուսումնասիրմանը՝ նրանց մեջ հազվագյուտ և ցրված մետաղներ հայտնաբերելու նպատակով: Այդ մետաղներն իրենց բացառիկ հատկությունների, ինչպես նաև հանման տեխնոլոգիայի մշակման կապակցությամբ ժամանակակից տեխնիկայում (ավտոմատիկայում, էլեկտրոնիկայում, ռադիոտեխնիկայում և այլն) ձեռք են բերել հսկայական նշանակություն: Կատարված հետազոտությունների շնորհիվ Հայաստանի հանքանյութերի կազմում հաջողվեց հայտնաբերել այնպիսի արժեքավոր էլեմենտների խառնուրդներ, ինչպիսիք են՝ ունիտամ, գալիտամ, սելեն, թերուր, ինորիտամ, գերմանիտամ և այլն, ընդ որում այնպիսի կոնցենտրացիաներով, որոնք մի շարք դեպքերում զգալիորեն գերազանցում են հանքանյութերում եղած սովորական պարունակությունից:

Հանքավայրերի խոշոր շահերի և նրանց հանույթների մաշտաբների կապակցությամբ նույնիսկ հանքանյութերում գրված մեծ մետաղների սովորական պարունակությունը ցրված մետաղների

փոքր պարունակությունների դեպքում, նրանք կարող են զուգընթացաբար ստացվել զգալի քանակություններով:

Հայաստանի հանքավայրերի հանքանյութերի կազմում հազվագյուտ և ցրված էլեմենտների խառնուրդների հայտնաբերումը և նրանց հանման ուղիղությունը տեխնոլոգիայի մշակումը բնականաբար խիստ բարձրացրեցին հանքանյութի արժեքավորությունը:

Վերևում նշված հանքային շրջանների սահմաններից դուրս հայտնի են, գլխավորապես, ոչ մետաղային օգտակար հանածոների բազմաթիվ հանքավայրեր: Ամենից առաջ դրանց թվին են պատկանում անցյալ երկրաբանական ժամանակի հրաբխային գործումներով՝ իրենց շինարարական հատկություններով և գույնականություններով և գույնավորումների բազմազանությամբ աշքի ընկնող հիանալի հրաբխային տուֆերը, պեմզաները, խարամները, բազալտները և այլն, որոնք լայնորեն կիրառվում են ինչպես ռեսպուլիկայի շինարարության մեջ, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այդ բնական շինարարական նյութերի պաշարները հսկայական են և գործնականորեն անսպառ:

Հայաստանում լայնորեն զարգացած են քիմիապես մաքուր այն կրաքարերի հանքավայրերը, որոնք կիրառվում են ցեմենտի, կրի, կալցիումի կարբիդի և վերջինիս բազայի վրա՝ սինթետիկ կառչուկի արտադրության մեջ, իրենց դեկորատիվ հատկություններով հայտնի մարմարների հանքավայրերը, այդ թվում հիանալի օնիքանաման մարմարները, դրումիտը, գիպսը, փիատոմիտը, կվարցիտները, միներալային ներկերը, թանկարժեք քարերը և այլն:

Բոլորութին վերջերս երևանի շրջանում, հորատման պրոցեսում, հայտնաբերվել է կերակրի աղի հանքավայրը: Իր չափերով այդ հանքավայրը հանդիսանում է Սովետական Սիրության մեջ տեմենախոցորներից մեկը: Այդի կուտակների կարուղությունը հասնում է մինչև 500 և ավելի մետրի ու զբաղեցնում է տասնյակ կմ տարածություն: Պաշարները հաշվվում են միլիարդ տոննաներով: Տասնյակ մետր կարողությամբ աղի առանձին շերտեր աշքի են ընկնում իրենց մեծ մաքությամբ:

Ներկայումս այրելի օգտակար հանածոներից աղբյումաբերական նշանակություն ունեն և մշակվում են տորֆի կուտակները՝ թասարգելարի և Կալինինոյի շրջաններում:

Հայաստանը հարուստ է նաև բուժիչ հանքային ջրերով: Հայտնաբերված և ուստամասիրված աղբյուրների թիվն անցնում է 200-ից: Լայն հռչակ են ստացել Զերմոսկի, Արգնիի, Դիլիջանի, Հանքավանի հանքային ջրերը: Տաթև և Դավառու գյուղերի մոտ գտնվող հանքային աղբյուրները մեծ բազնեոլոգիական հետաքրքրություն են ներկայացնում:

Արարատյան դաշտավայրի սահմաններում և ռեսպուբլիկայի բարձր լեռնային շրջաններում կատարված հիդրոերկրաբանական ուստամնասիրությունները թույլ են տվել հայտնաբերել արտեզյան ջրերի և ստորերկրյա ջրահոսքերի խողոր կուտակուաններ և հաջող կերպով լուծել անջրդի հողերն ու արտավայրերը ջրելու պրոբլեմը:

Հանքային հարստությունների լայն օգտագործումը, նրանց բազայի վրա խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը կարճ ժամանակուամ Հայաստանը դարձեցին Ստվետական Միության առաջավոր ինդուստրիալ ռեսպուբլիկաններից մեկը:

Ներկայումս ռեսպուբլիկայում միներալային հոտաքի հայտնաբերված պաշտոները թույլ են տալիս նրանց բազայի վրա ստեղծել նոր ձեռնարկություններ և գդալիորեն ընդլայնել գոյությունը ունեցողները:

Մեր երկրում տեղի ունեցող շինարարական աշխատանքների բուռն աճի կապակցությամբ մեծ նշանակություն են ձեռք բերում Հայաստանի բնական շինարարական քարերը: Իբրև բնական ծակոտվեն լցանութեր՝ թեթև բնետոնի և ներկաթերետոնի արտադրության համար լայն կիրառություն կարող են գտնել թեթև հրաբխային ապարները (պեմզաները, հրաբխային խարամները, տուփերը, մոխիրները): Հանքավայրի խոշոր շափերը (հաջվի առնված պաշարները կազմուան են մոտ 2 մլրդ. մ³), նրանց անմիջական մոտիկությունը երկաթուղային հանապարհներին և էքսկավատորներով բաց հանուլիթի հնարավորու-

թյունները բացառիկ բարենպաստ պայմաններ են ստեղծում հանքավայրերը խոշոր մասշտաբներով մշակելու համար:

Ներկայումս Հայաստանի բնական ծակութեն լցանութերը արտահանվում են Վրաստան և Ադրբեյջան: Նրանց արտահանման շառավիղը կարող է զգալիորեն ընդլայնվել: Նրանք մասնավորապես կարող են արտահանման Պովլովիե, որտեղ մի շարք տնտեսական շրջաններ (Աստրախանի, Ուլյանովի, Թաթարական ԱՍՍՌ) շունեն իրենց հոմքային ռեսուրսները՝ ծակութեն և իներս լցանութերի արտադրության համար: Տնտեսական հաշվումները ցույց են տալիս, որ հայկական բնական ծակութեն լցանութերը իրենց օգտագործման տեղուա՞ Պովլովիեի քաղաքներում կլինեն 2—3 անգամ ավելի էժան, քան այստեղ կիրառվող արհեստական ծակութեն լցանութերը (կերամիկա, պեղլիտ):

Ռեսպուբլիկայի մարմարների հետախուզված պաշարները թույլ են տալիս ընդլայնել մարմարի շինափառների արտադրությունը՝ շինարարական և էլեկտրատեխնիկական կազմակերպությունների պահանջները բավարարեցն համար: Հայկական մարմարը, որ աջքի է ընկնուած լավդեկորատիվ հատկություններով, լայնորեն օգնուագործվուած է նաև ռեսպուբլիկայի սահմաններից դրուս:

Երևանի շրջանում գտնված գիպս պարունակող ապարների հզոր կուտակները հնարավորություն ներառնելու հիմային ավելացնել գաջի արտադրությունը, որի պահանջը տարեցտարի աճում է: Գիպս պարունակող շերտախմբի մեջ գտնվող գիպսի մաքուր տարատեսակները կարող են արդյունահանվել բժշկական նպատակների համար:

Շինարարության գործուած, իբրև շերմամեկութիւն և ձայնամեկութական նյութ, լայն կիրառություն կարող է գտնել դիատոմիտը, որի խոշոր կուտակները հայտնաբերված են ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում (Աշտարակ, Կոտայք, Սիսիան և այլն):

Հանքային ներկերի հայտնաբերված պաշարները հնարավորություն են տալիս ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում (Աշտարակ, Կոտայք, Սիսիան և այլն):

ցամը) կարող է օգտագործվել բարիտը, որի հանքավայրերը գտնվում են Ալավերդու շրջանում:

Ուշարահիմնային ապարների, մագնեղիտների և դոլոմիտների բազայի վրա, որոնց պաշարները զգալիորեն մեծ են, կարելի է կազմակերպել բարձրորակ հրահնստ շինվածքների արտադրություն։ Կատարված տեխնոլոգիական ուսումնասիրությունները տվել են միանգամայն բարենպաստ արդյունքներ։ Թանկարժեք բարերի (աղատի, հասպիսի, օբսիդիանի և այլն) հանքավայրերի առկայությունը թույլ է տալիս կազմակերպել ակնագործական շինվածքների արտադրություն։ Հատուկ ուշադրության են արժանի երևանից հյուսիս դանվող Դութանսար (Քեթանդաղ) հրաբխի լանջին տարածված օբսիդիանների արծաթափայլ տարատեսակները։ Այդ օբսիդիանները օգտագործվել են մետակիե սամոցվետից տրեստի կողմից և ստացել բարձր գնահատական։

Կվարցիտի և կվարցա-պեմզային ավազների հանքավայրերի բազայի վրա հնարավոր է բնողայնել ապակու տարայի արտադրությունը,

որն անհրաժեշտ է պահածոների զարգացող արտադրության և հանքային ջրերի լցման համար։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի քիմիական ինստիտուտը կվարցիտի մաքուր տարատեսակներից ստացել է բյուրեղապակու տիպի բարձրորակ ապակի։

Անհրաժեշտ է կանգ առնել նաև մի կարևոր հարցի վրա։ Դա Հայաստանում ծծմբական թթվի արտադրության ավելացումն է, որի պահանջը տարեցտարի աճում է։ Այդ պահանջը առանձնապես կածի օբսիդացված պղնձա-մոլիբդենային հանքանյութերի հարստացման, տեխնոլոգիական պրոցեսում ծծմբական թթվի կիրառության կապակցությամբ։

Նման փոքրածավալ հողվածում դժվար է լուսաբանել այն բազմատեսակ հարցերը, որոնք կապված են միներալային հումքի օգտագործման հետ։ Կասկածից դուրս է, որ միներալային հարստությունների լայն օգտագործման բազայի վրա միայն կարելի է ապահովել ոեսպուֆլիկայի ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՈՐՄՆԱԳԱՐԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ՆՐԱ ՀԱՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ .

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Փողտնտիւրենի շինարարական հյութերի արդյունաբերության վարչուրյան պետ

I. ՈՐՄՆԱԳԱՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանը Խրբորդային ու շուրջորդային ժամանակաշրջանների հրաբխային ծագման բազմանակագալու բնական քարերի նյութերի է։

Իրենց ֆիզիկա-մեխանիկական հատկություններով քարեր նյութերը բաժանվում են մինչև 2000 կգ/մ³ ծավալային կշիռ տակածող թեթև ծակոտվեն քարերի և 2000 կգ/մ³-ից բարձր ծավալային կշիռ ունեցող ծանր, պինդ քարերի։

Թեթև, ծակոտվեն քարեր նյութերի թվին են

պատկանում տուփերը, պեմզաները, հրաբխային խարամները, պեղիտները և այլն, իսկ ծանր, պինդ քարերի թվին՝ անդեղիտները, անդեղիտրազալտները, բազալտները, գրանիտները, գրանոդորիտները, գիորիտները, մարմարները, կրաքարերը և այլն։

Մեր ոեսպուֆլիկայի քարեր նյութերի համբային ոեստրաները անսպառ են, Տոփերի պաշարները հասնում են 2 մլրդ. մ³, պեմզա-խարամային նյութերինը՝ ավելի քան 2 մլրդ. մ³, անդեղիտներինը, անդեղիտ-բազալտներինը և բազալտներինը՝ մոտ 125 մլրդ. մ³, գրանիտներինը, գրանոդորիտներինը, գիորիտներինը և կրաքարե-